ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՊԱՏԿԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

DOI: 10.52174/2579-2989_2024.1-29

Հիմնաբառեր. *զբաղվածություն, անվանական աշխատավարձ, իրական աշխատավարձի ինդեքս, աշխատավարձի նվազագույն մակարդակ*

Անի ԽԱՉԱՏՐՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու

2011 թ. ավարտել է ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղը և 2013 թ. ընդունվել ՀՊՏՀ ասպիրանտուրա: 2017 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսությունը և ստացել տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան:

2015-2016 թթ. դասավանդել է ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղում: 2016 թ.-ին աշխատանքի է անցել «Ամբերդ» հետազոտական կենտրոնում: 2017 թ.-ից մինչ օրս դասավանդում է ՀՊՏՀ վիճակագրության ամբիոնում:

ORCID - https://orcid.org/0000-0002-6883-455X

Հայաստանի տնտեսության զարգացման և աղքատության կրճատման կարևորագույն նախապայմանը զբաղվածության ընդլայնումն է: Այս առումով, առանցքային դերակատարություն ունի զբաղվածության բնույթի, կառուցվածքային տեղաշարժերի օբյեկտիվ արտացոլումը, որն անհրաժեշտ է նպատակային և կենսունակ քաղաքականություն վարելու համար: Հոդվածում փորձ է արվել վերլուծելու ՀՀ տնտեսության և զբաղվածության կառուցվածքը, որը պատկերացում է տալիս առանձին ոլորտների արտադրողականության մասին:

Անվանական և իրական աշխատավարձերի կուտակային աճի վերլուծությունից պարզ է դարձել, որ թեև անվանական աշխատավարձն աճել է, այնուհանդերձ, բնակչության տարբեր խմբերի սոցիալական լարվածությունը չի թուլացել: Նույն կերպ՝ թեև վերջին տարիներին Հայաստանի և Հնդկաստանի միջին աշխատավարձերի մակարդակների միջև ճեղքվածքի աճը նպաստել է հնդիկ միգրանտների ներհոսքին դեպի Հայաստան, սակայն տնտեսության և զբաղվածության կառուցվածքային հիմնախնդիրները, ինչպես նաև աշխատավարձի գնողունակության ցածր մակարդակը հնարավորություն չեն տվել Հայաստանի բնակչության մի զգալի մասին բավարարելու իր նյութական և ոչ նյութական կարիքները:

Զարգացման տարբեր մակարդակ ունեցող երկրներում տնտեսական առաջընթացի և բնակչության բարեկեցության կարևորագույն նախապայմանը զբաղվածության խթանումն է: Հայաստանի



ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

Զբաղվածության մակարդակը 2023 թ. նոյեմբերին՝ ըստ Աշխատանքի միջազգային կազմակերպության տվյալների, %[1]

բնակչության զբաղվածության հիմնախնդիրների վերաբերյալ պատկերացում կազմելու համար անհրաժեշտություն է առաջանում դիտարկելու զբաղվածության բնույթը, կառուցվածքային առանձնահատկությունները, ինչպես նաև աշխատավարձի մակարդակի փոփոխման միտումները:

ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների համաձայն՝ 2023 թ. երրորդ եռամսյակում զբաղվածության մակարդակը կազմել է 54,3%, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճել է ընդամենը 0,5 տոկոսային կետով[2]: Այսինքն՝ Հայաստանում յուրաքանչյուր երկու բնակչից միայն մեկն է համարվում զբաղված:

Ըստ Աշխատանքի միջազգային կազմակերպության 2023 թ. նոյեմբերի տվյալների՝ Հայաստանում զբաղվածության մակարդակը կազմել է 56,2 տոկոս, որով մեր երկիրը զիջում է ԵԱՏՄ բոլոր երկրներին, ինչպես նաև Ադրբեջանին (գծապատկեր 1):

Զբաղվածության հիմնախնդիրներն ակնհայտ են դառնում, երբ համադրվում են տնտեսության և զբաղվածության կառուցվածքները: Այսպես, ըստ Համաշխարհային բանկի 2022 թվականի տվյալների, Հայաստանի համախառն թողարկման ծավալում ավելացված արժեքի շուրջ 56%-ը ստեղծվում է ծառայությունների ոլորտում, որին բաժին է ընկնում զբաղվածների 50%-ը: Համեմատության համար նշենք, որ հարևան Վրաստանում ծառայությունների ոլորտի արտադրողականության մակարդակն ավելի բարձր է. ոլորտում աշխատում են զբաղվածների 46%-ը՝ ապահովելով համախառն ավելացված արժեքի շուրջ 60%-ը[3]:

Աղյուսակ 1-ում և 2-ում կարելի է նկատել, որ Հայաստանում գյուղատնտեսության ոլորտին բաժին է ընկնում ընդհանուր զբաղվածների շուրջ մեկ երրորդը, որն էլ ստեղծում է ավելացված արժեքի 10.4%-ը, ինչը վկայում է ոլորտի ցածր արտադրողականության մասին: Փոխարենը՝ արտադրողականության մակարդակն ավելի բարձր է արդյունաբերության ոլորտում (զբաղվածների ընդամենը մեկ հինգերորդն ապահովում է համախառն ավելացված արժեքի մեկ չորրորդը), ինչը, սակայն, առավելապես պայմանավորված է հանքարդյունաբերության և շինարարության ոլորտների կողմից ստեղծված ավելացված արժեքով:

Բացասական են համարվում մշակող արդյունաբերությունում զբաղվածության մասնաբաժնի կրճատման միտումները՝

[1] Աղբյուրը՝ Աշխատանքի միջազգային կազմակերպություն, https://ilostat.ilo.org/topics/employment/
[2] Աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2023 թվականի հունվար-դեկտեմբերին, էջ 83, https://armstat.am/file/article/sv_12_23a_141.pdf
[3] Աղբյուրը՝ Համաշխարհային բանկի տվյալների բազա, https://data.worldbank.org/indicator/NV.SRV.TOTL.ZS?locations=XT-AM-AZ-GE

ԱՂՅՈՒՍԱԿ 1

Հայաստանի, հարևան և միջին եկամուտ ունեցող երկրների տնտեսությունների կառուցվածքը, 2022 թ.[4]

	Գյուղատնտեսություն	Արդյունաբերություն (ներառյալ շինարարությունը)	Մշակող արդյունաբերություն	Ծառայություններ
Հայաստան	10.4	25.3	11	55,5
Վրաստան	6	21.4	10	59,6
Ադրբեջան	4.8	55.9	5	32,2
Միջինից բարձր եկամուտ ունեցող երկրներ, միջինը	6.8	36.4	23	53,4
Միջինից ցածր եկամուտ ունեցող երկրներ, միջինը	15.5	29.0	15	48,7

ԱՂՅՈՒՍԱԿ 2

Հայաստանի, հարևան և միջինից բարձր եկամուտ ունեցող երկրների զբաղվածության կառուցվածքը, 2021 թ.[5]

	Գյուղատնտեսություն	Արդյունաբերություն (ներառյալ շինարարությունը)	Մշակող արդյունաբերություն[6]	Ծառայություններ
Հայաստան	30	18	6	52
Վրաստան	40	14	6	46
Ադրբեջան	34	15	6	50
Միջինից բարձր եկամուտ ունեցող երկրներ, միջինը	22	26	18	53
Միջինից ցածր եկամուտ ունեցող երկրներ, միջինը	38	23	12	-

հաշվի առնելով այն, որ ոլորտը հեռանկարային է արտադրողականության բարձր մակարդակի տեսանկյունից: Այսպես՝ Հայաստանում մշակող արդյունաբերության ոլորտում աշխատում է զբաղվածների շուրջ 6%-ը, որն ապահովում է համախառն ավելացված արժեքի 11%-ը: Չնայած Հայաստանն այս ցուցանիշներով գերազանցում է հարևան երկրներին, սակայն մեզ համար դեռևս անհասանելի է միջինից բարձր եկամուտ ունեցող երկրների միջին մակարդակը (զբաղվածների 18%-ը ստեղծում է համախառն ավելացված արժեքի 23%-ը)[7]:

Դիտարկելով զբաղվածության աշխարհագրական կառուցվածքը՝ կարելի է նկատել, որ գյուղական բնակավայրերում զբաղվածության մակարդակը գերազանցում է քաղաքային բնակավայրերի նույնանուն ցուցանիշը: Նախորդ տարիների համեմատ՝ վերջին հինգ տարում գյուղական և քաղաքային բնակավայրերի միջև ճեղքվածքը կրճատվել է, սակայն դա տեղի է ունեցել գյուղական բնակավայրերում զբաղվածության մակարդակի նվազման արդյունքում: Այսպես՝ եթե 2012 թվականին գյուղական բնակավայրերում զբաղվածության մակարդակը 69,4 տոկոս էր, ապա 2022 թվականին դա նվազել է ավելի քան 10 տոկոսային կետով՝ կազմելով 57,6 տոկոս (գծապատկեր 2): Այս պատկերը մասամբ պայմանավորված է նաև գյուղատնտեսության ոլորտում ոչ ֆորմալ զբաղվածության կրճատմամբ:

Մտահոգիչ է այն հանգամանքը, որ թեև գյուղական բնակավայրերում, քաղաքայինի համեմատ, զբաղվածությունը բարձր է, սակայն աղքատության մակարդակն անհամեմատ ավելի բարձր է: Այսինքն,

[4] Աղբյուրը՝ Համաշխարհային բանկի տվյալների բազա, https://data.worldbank.org/indicator/NV.SRV.TOTL.ZS?locations=XT-AM-AZ-GE

[5] Աղբյուրը՝ Համաշխարհային բանկի տվյալների բազա, https://data.worldbank.org/indicator/SL.IND.EMPL.ZS?locations=XT-AM-AZ-GE-1W-XN

[6] Աղբյուրը՝ Աշխատանքի միջազգային կազմակերպության տվյալների բազա, ILOSTAT explorer, https://www.ilo.org/shinyapps/bulkexplorer54/?lang=en&id=EAR_4MTH_SEX_ECO_CUR_NB_A

[7] Աղբյուրը՝ Աշխատանքի միջազգային կազմակերպության տվյալների բազա, ILOSTAT explorer, https://www.ilo.org/shinyapps/bulkexplorer54/?lang=en&id=EAR_4MTH_SEX_ECO_CUR_NB_A



ԳԾԱՊԱՏԿԵՐ 2

Զբաղվածության մակարդակը քաղաքային և գյուղական բնակավայրերում, 2008-2022 թթ.[8]

զբաղված լինելով հանդերձ, գյուղական տնային տնտեսությունները դեռևս հնարավորություն չունեն խուսափելու աղքատությունից: Այսպես՝ 2023 թ. հունվար-նոյեմբերին գյուղատնտեսության ոլորտում աշխատավարձի միջին մեծությունը կազմել է շուրջ 165,6 հազ. դրամ, կրթության ոլորտում՝ շուրջ 143,7 հազ. դրամ, իսկ մշակույթի և արվեստի ոլորտում՝ 143,6 հազ. դրամ, ինչն աղքատության մեջ հայտնվելու ռիսկեր է առաջացնում[9]: Այսինքն՝ երկու երեխայից և երկու չափահաս անդամից բաղկացած տնային տնտեսությունները, որոնցից մեկը զբաղված է կրթության, իսկ մյուսը՝ գյուղատնտեսության ոլորտում, «հավակնում» են համալրելու աղքատների շարքերը: Ըստ այդմ, 15-75 տարեկան աղքատ բնակչության մեջ անհամեմատ մեծ է զբաղվածների տեսակարար կշիռը (56,8%), այսինքն՝ 15-75 տարեկան աղքատ բնակչության մեջ յուրաքանչյուր երկրորդ աղքատն աշխատում է: Այլ կերպ ասած, զբաղված լինելով հանդերձ, բնակչության զգալի մասը հնարավորություն չունի հոգալու իր նյութական և ոչ նյութական կարիքները: Կան ոլորտներ, որտեղ զբաղված լինելու հանգամանքն աղքատությունից խուսափելու գրավական չէ[12]:



ԳԾԱՊԱՏԿԵՐ 3

Անվանական և իրական աշխատավարձերի կուտակային աճի տեմպերը, 2008-2022 թթ.[10]

[8] Աղբյուրը՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների բազա, https://statbank.armstat.am/pxweb/hy/ArmStatBank/ArmStatBank__2%20Population%20and%20social%20processes__23%20Employment%20and%20unemployment/PS-eu-15-2022.px/table/tableViewLayout1/?rxid=9ba7b0d1-2ff8-40fa-a309-fae01ea885bb

[9] Աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2023 թվականի հունվար-դեկտեմբերին, էջ 125-126, https://armstat.am/file/article/sv_12_23a_142.pdf

[10] Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկներն ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների, https://statbank.armstat.am/pxweb/hy/ArmStatBank/ArmStatBank__2%20Population%20and%20social%20processes__23%20Employment%20and%20unemployment/PS-eu-19-2022.px/table/tableViewLayout2/?rxid=9ba7b0d1-2ff8-40fa-a309-fae01ea885bb



ԳԾԱՊԱՏԿԵՐ 4

Մեկ աշխատողի հաշվով թողարկման (ՀՆԱ) և իրական աշխատավարձի կուտակային աճը, 2007-2022 թթ.[11]

Զբաղվածության հիմնախնդիրների մասին ավելի խորքային պատկերացում կազմելու համար տեղին է դիտարկել անվանական և իրական աշխատավարձերի ինդեքսների կուտակային աճը (գծապատկեր 3): Կարելի է նկատել, որ անվանական և իրական աշխատավարձերի ինդեքսների կուտակային աճի միջև ճեղքվածքը հատկապես վերջին տարիներին նկատելիորեն խորացել է, ինչը վկայում է այն մասին, որ անվանական աշխատավարձի աճին զուգահեռ, աշխատավարձի գնողունակությունը շատ դանդաղորեն է աճել, հետևաբար՝ աշխատավարձի աճը դեռևս մարդկանց ավելի լավ ապրելու ցուցիչ չէ:

Խնդրահարույց է նաև այն, թե որքանով է իրական աշխատավարձի կուտակային աճը համապատասխանում աշխատանքի արտադրողականության կուտակային աճին: Գծապատկեր 4-ից ակնհայտ է դառնում, որ 2008-2013 թթ. հիմնականում իրական աշխատավարձի կուտակային աճը գերազանցել է մեկ աշխատողի հաշվով թողարկման կուտակային աճը, 2013-2016 թթ. այդ երկու ցուցանիշները հավասարվել են, մինչդեռ 2017-2022 թթ. իրական աշխատավարձի կուտակային աճը ցածր է աշխատանքի արտադրողականության աճի մեծությունից, ինչը վկայում է կատարված աշխատանքի դիմաց ոչ համարժեք վարձատրության մասին:

Արդյունքում բարձր որակավորում ունեցող մասնագետների մի ստվար զանգված նախընտրում է արտադրողականությանը համապատասխան՝ ավելի բարձր վարձատրությամբ աշխատանք գտնել արտասահմանում: Այս առումով, Հայաստանի հետնապահ դիրքը եվրոպական և նաև հարևան երկրների նկատմամբ ակնհայտ է նույնիսկ նվազագույն աշխատավարձի պարզագույն համեմատության դեպքում: Այսպես, ըստ 2017 գնողունակության համարժեքի հաշվարկված նվազագույն աշխատավարձի մակարդակի, Հայաստանը նկատելիորեն հետ է մնում ինչպես եվրոպական երկրներից, այնպես էլ հարևան Ադրբեջանից, Իրանից և Ռուսաստանից (գծապատկեր 5): Մինչդեռ այս ցուցանիշով Հայաստանը նշանակալիորեն գերազանցում է Հնդկաստանին, ինչն էլ շահադրդում է հնդիկ միգրանտներին աշխատել Հայաստանում:

Ուսումնասիրելով Հայաստանի և Հնդկաստանի աշխատավարձերի միջին մակարդակի շարժընթացը՝ կարելի է նկատել, որ վերջին երկու տարվա ընթացքում անվանական միջին աշխատավարձերի միջև ճեղքվածքը կտրուկ մեծացել է, ինչով

[11] Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկներն ըստ Աշխատանքի միջազգային կազմակերպության (https://www.ilo.org/shinyapps/bulkexplorer5/?lang=en&id=SDG_B821_NOC_RT_A) և ՀՀ վիճակագրական կոմիտեի (https://armstat.am/am/?nid=12&id=08002&submit=%D5%93%D5%B6%D5%BF%D6%80%D5%A5%D5%AC) տվյալների:

[12] Աղբյուրը՝ Խաչատրյան Ա. (2023), Աղքատության նյութական և ոչ նյութական հարթությունները Հայաստանի Հանրապետությունում, Տնտեսություն և հասարակություն, ՀՊՏՀ, «Տնտեսագետ», 3(3), էջ 84, DOI: 10.52174/29538114_2023.3-69



ԳԾԱՊԱՏԿԵՐ 5

Աշխատավարձի նվազագույն մակարդակը 2022 թ.՝ ըստ 2017 թ. գնողունակության համարժեքի, ԱՄՆ դոլար[13]

էլ բացատրվում է հնդիկ միգրանտների ներհոսքը դեպի Հայաստան (գծապատկեր 6):

Այսպիսով՝ Հայաստանը հայտնվել է հակասական իրավիճակում, քանի որ մի կողմից արձանագրվում է բարձր որակավորում ունեցող աշխատուժի նկատելի արտահոսք ցածր վարձատրության պատճառով, իսկ մյուս կողմից՝ նույն վարձատրությունը խթանում է էժան աշխատուժի ներգրավումը Հնդկաստանից:

Ուստի կարող ենք եզրակացնել, որ զբաղվածության և անվանական աշխատավարձերի աճը, ըստ էության, չի նպաստել բնակչության կենսապայմանների բարելավմանը և սոցիալական լարվածության մեղմմանը: Տնտեսության և զբաղվածության կառուցվածքային հիմնախնդիրները, ինչպես նաև աշխատավարձի գնողունակության ցածր մակարդակը թույլ չեն տալիս բնակչության մի զգալի մասին բավարարել իր նյութական և ոչ նյութական կարիքները: Հետևաբար՝ օրակարգային է զբաղվածության ընդլայնմանն ուղղված ջանքերի կենտրոնացումը՝ խարըսխված սոցիալական լարվածության թուլացման և բնակչության կենսապայմանների բարելավման վրա:



ԳԾԱՊԱՏԿԵՐ 6

Անվանական միջին ամսական աշխատավարձի մակարդակը Հայաստանում և Հնդկաստանում, 2008-2023 թթ., ԱՄՆ դոլար[14]

[13] Աղբյուրը՝ Աշխատանքի միջազգային կազմակերպություն, https://ilostat.ilo.org/topics/wages/

[14] Աղբյուրը՝ Աշխատանքի միջազգային կազմակերպության տվյալների բազա, Global wage report: Data, https://www.ilo.org/global/topics/wages/WCMS_884990/lang--en/index.htm?fbclid=IwAR2aWbijkPPW29ikGsRne4kEdZSqM1zVPEdiGqglsAVr-VAQaTC46tE0Dx10

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աշխատանքի միջազգային կազմակերպության տվյալների բազա, Global wage report: Data, https://www.ilo.org/global/topics/wages/WCMS_884990/lang--en/index.htm?fbclid=IwAR2aWbijkPPW29ikGsRne4kEdZSqM1zV-PEdiGqglsAVrVAQaTC46tE0Dx10
2. Աշխատանքի միջազգային կազմակերպության տվյալների բազա, ILOSTAT explorer, https://www.ilo.org/shinyapps/bulkexplorer54/?lang=en&id=EAR_4MTH_SEX_ECO_CUR_NB_A, https://ilostat.ilo.org/topics/employment/, https://ilostat.ilo.org/topics/wages/
3. Խաչատրյան Ա. (2023), Աղքատության նյութական և ոչ նյութական հարթությունները Հայաստանի Հանրապետությունում, Տնտեսություն և հասարակություն, ՀՊՏՀ, «Տնտեսագետ», 3(3), էջ 84, DOI: 10.52174/29538114_2023.3-69
4. Համաշխարհային բանկի տվյալների բազա, https://data.worldbank.org/indicator/NV.SRV.TOTL.ZS?locations=XT-AM-AZ-GE
5. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2023 թվականի հունվար-դեկտեմբերին, https://armstat.am/file/article/sv_12_23a_141.pdf
6. ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների բազա, https://statbank.armstat.am/pxweb/hy/ArmStatBank/ArmStatBank__2%20Population%20and%20social%20processes__23%20Employment%20and%20unemployment/PS-eu-15-2022.px/table/tableViewLayout1/?rxid=9ba7b0d1-2ff8-40fa-a309-fae01ea885bb

Ани ХАЧАТРЯН
Старший исследователь исследовательского центра «Амберд», АГЭУ, кандидат экономических наук

СОЦИАЛЬНАЯ ПОЛИТИКА

КАРТИНА ЗАНЯТОСТИ В РА

Важнейшей предпосылкой развития экономики Армении и сокращения бедности является расширение занятости. В этой связи ключевую роль играют объективное отражение характера занятости, структурных сдвигов, необходимых для реализации целенаправленной и жизнеспособной политики. В статье предпринята попытка провести структурный анализ экономики и занятости РА, который дает представление о производительности отдельных отраслей. Из анализа совокупного роста номинальной и реальной заработной платы стало ясно, что номинальная заработная плата хотя и выросла, но не ослабила социальную напряженность различных групп населения. Следует отметить, что, хотя в последние годы, увеличение разрыва между средними уровнями заработной платы Армении и Индии способствовало притоку индийских мигрантов в Армению, структурные проблемы экономики и занятости, а также низкий уровень заработной платы покупательная способность заработной платы, не позволяют значительной части населения Армении удовлетворить свои материальные и нематериальные потребности.

Ключевые слова: *занятость, номинальная заработная плата, индекс реальной заработной платы, уровень минимальной заработной платы*

Ani KHACHATRYAN
Senior researcher at «Amberd» Research center, ASUE, PhD in Economics

SOCIAL POLICY

PICTURE OF EMPLOYMENT IN THE RA

The most important precondition for the development of Armenia's economy and reduction of poverty is the expansion of employment. In this regard, the objective reflection of the nature of employment, structural changes play an essential role and are necessary for the implementation of a targeted and feasible policy. The paper conducted a structural analysis of the RA economy and employment , revealing the productivity of different sectors of the economy. From the analysis of cumulative growths of nominal and real wages, it is clear that while the nominal wages have increased, has not relieved the social tension of different groups of the population. It should be noted that although the increase in the gap between the nominal monthly wages of Armenia and India in recent years has contributed to the influx of Indian migrants to Armenia, however, the structural problems of the economy and employment, as well as the low level of purchasing power of wages, do not allow a significant portion of the population of Armenia to meet their material and non-material needs.

Keywords: *employment, nominal wage, real wage index, minimum wage level*